ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 08.01.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ

ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

թիվ ՍՑ-ԷՍ-2018/189

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 12.12.2018թ. թիվ 27/26-3/23038-18 գրությամբ «ԷՅՉ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 05.12.2018թ. թիվ Ե/40/2015-18 գրության հիման վրա, 12.12.2018թ. «ԷՅՉ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

2. **<u>«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ն 05.12.2018թ. թիվ Ε/40/2015-18 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

««Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի և «ԷՅՉ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի միջև 19.04.2018թ. կնքվել է պայմանագիր, որով «ԷՅՉ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն պարտավորվում էր պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 40 օրացուցային օրվա ընթացքում «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ին մատակարարել շինարարական սեպավոր փայտամածեր:

«ԷՅՉ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն 25.05.2018թ. գրություն էր ներկայացրել, որով խնդրում էր երկարացնել ապրանքների մատակարարման ժամկետը ևս 30 օրացուցային օրով՝ պատճառաբանելով ուշացումը գործարանի ծանրաբեռնվածության և պատվերի մեծաքանակ լինելով, միաժամանակ հավաստիացնելով, որ ապրանքները գտնվում են արտադրական վերջին փուլում և շուտով պատրաստ կլինեն:

Ուսումնասիրելով ստեղծված իրավիճակը և հաշվի առնելով այդ ապրանքների անհրաժեշտության հրատապությունը պլանային նախազգուշական վերանորոգման աշխատանքների ընթացքում՝ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ն գնաց ընդառաջ «ԷՅՉ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին և մատակարարման ժամկետը երկարացրեց մինչը 07.06.2018թ. ներառյալ: Սակայն ավելացված ժամանակահատվածում ևս մատակարարումը չկատարվեց:

Նախատեսված աշխատանանքների համար ձեռքբերվող շինարարական սեպավոր փայտամածերի չմատակարարելը «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի համար ստեղծեց նշանակալի դժվարություններ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ պայմանագրով նախատեսված ապրանքների ձեռքբերմամբ կատարվող աշխատանքները արդեն ավարտվել են և վերացել է այդ ապրանքների ձեռքբերման պահանջը 12.07.2018թ. «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ն միակողմանի լուծեց պայմանագիրը՝ այդ մասին ծանուցելով «ԷՅՉ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին:»:

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ն պատշաճ ծանուցվել է Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն ՓԲԸ-ի կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

3. «ԷՅՉ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«ԷՅՉ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն 20.12.2018թ. գրությամբ Բողոքներ քննող անձին ներկայացրել է գրավոր դիրքորոշում, որով հայտնել է հետևյալը.

««Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից 28.02.2018թ. հրապարակվել է ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-20/18 ծածկագրով շինարարական սեպավոր փայտամածերի ձեռքբերման գնման ընթացակարգ (այսուհետ՝ Ընթացակարգ):

Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «ԷՅՉ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Ընկերություն):

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից Ընկերությունը ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցնող, այնոհետև հաղթող մասնակից:

Պատվիրատուի և Ընկերության միջև 2018 թվականի ապրիլի 19-ին կնքվել է թիվ 01/058 պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր):

Պայմանագրի թիվ 2 հավելվածի՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ ապրանքը պետք է մատակարարվեր պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից հաշված՝ 40 օրացուցային օրվա ընթացքում:

Պայմանագրի 8.1 կետի համաձայն՝ պայմանագիրը ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրի 2.1.1 կետի համաձայն՝ պատվիրատուն իրավունք ունի ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետը խախտվել է 30 օրից ավել:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 417-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության հիմքեր կարող են առաջանալ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելիս պարտավորությունը

չկատարած կամ անպատշաճ կատարած անձը պատասխանատվություն է կրում, եթե չապացուցի, որ պատշաճ կատարումն անհնար է եղել անհաղթահարելի ուժի, այսինքն՝ տվյալ պայմաններում արտակարգ և անկանխելի հանգամանքների հետևանքով, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն.

1. Սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռք-բերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

2. Գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա, լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակումընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն.

1. Ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

2. Գնումների գործընթացին որևէ երկրի ռեզիդենտ հանդիսացող անձի (անձանց) մասնակցությունը կարող է սահմանափակվել միայն Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ, եթե դա անհրաժեշտ է Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության և պաշտպանության ապահովման համար:

Այսպիսով, Պայմանագրի համաձայն Ընկերությունը պետք է մատակարարեր շինարարական սեպավոր փայտամած ԼՍԿ-50 (ЛСК-50) ապրանքատեսակը, որը նախատեսված է եղել տուրբինային հատվածում կատարվելիք աշխատանքների իրականացման համար: Ապրանքը հրարավոր չէր ՀՀ-ում պատրաստել, այն պետք է պատրաստվեր և ներկրվեր ՌԴ-ից, որի պատրաստման համար անհրաժեշտ են առանձնահատուկ նյութեր՝ հատուկ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի համար, որի համար ավելի երկար ժամանակ էր անհրաժեշտ քան Պայմանագրով նախատեսված ժամկետն էր:

Ընկերությունը դիմում է ներկայացրել Պատվիրատուին և խնդրել է երկարացնել պայմանագրի ժամկետը 30 օրով:

Պատվիրատուի և Ընկերության իջև 31.05.2018թ. կնքվել է լրացուցիչ համաձայնագիր, որի արդյունքում պայմանագրի ժամկետը երկարաձգվել է 2018թ. հունիսի 7-ը ներառյալ:

Այս կապակցությամբ ցանկանում ենք հայտնել, որ Պատվիրատուի կողմից 30 օրով պայմանագրի կատարման ժամկետը երկարաձգելու դեպքում Ընկերությունը միանշանակ կարող էր մատակարարել նախատեսված ապրանքը:

Բացի այդ, ապրանքի մատակարարման ժամկետը համընկել է ՌԴ-ում տեղի ունեցած ֆուտբոլի աշխարհի առաջնության մեկնարկի հետ, և ուղղակի թե անուղղակի այդ փաստը ևս կապված էր ապրանքների պատրաստման անհնարինության հետ:

Այս դեպքում նաև անհասկանալի է, ինչում Պատվիրատուի կողմից ընդունելի չի եղել 30 օրով ապրանքի մատակարարման ժամկետը երկարացնելը:

Ցանկանում ենք նաև նշել, որ պայմանագիրը միակողմանի լուծելու դեպքում Պատվիրատուն պարտավոր է այն հրապարագել www.gnumner.am կայքի պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումների բաժնում, որը չի կատարվել Պատվիրատուի կողմից, որի արդյունքում գտնում ենք, որ պայմանագիրը լուծվել է ոչ իրավաչափ:»:

Ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստերին մասնակցում էր Ընկերության լիազորված ներկայացուցիչ Արթուր Վանյանը:

4. ՍՑ-ԷՍ-2018/189 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության 12.12.2018թ. թիվ 27/26-3/23038-18 գրությունը, «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի 05.12.2018թ. թիվ Ե/40/2015-18 գրությունը և կից փաստաթղթերը, «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի և «ԷՅՉ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի միջև 19.04.2018թ. կնքված թիվ 01/058 ծածկագրով գնման պայմանագիրը, «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի և «ԷՅՉ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի միջև 31.05.2018թ. կնքված թիվ 1-01-058 լրացուցիչ համաձայնագիրը, «ԷՅՉ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից 25.05.2018թ. «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ին ներկայացված գրությունը, «ԷՅՉ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից 20.12.2018թ. Բողոքներ քննող անձին ներկայացված գրավոր դիրքորոշումը, «Հայկական

ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից 12.07.2018թ. «ԷՅՉ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին ներկայացված թիվ E/40/572-18 գրությունը.

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի և «ԷՅՉ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի միջև 19.04.2018թ. կնքվել է թիվ 01/058 ծածկագրով գնման պայմանագիր (այսուհետ՝ նաև Պայմանագիր):

Պայմանագրի՝

- 1.1 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է նույն պայմանագրով (այսուհետ՝ նաև պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 Հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման • ժամանակացույցով նախատեսված շինարարական սեպավոր փայտամած (այսուհետ՝ նաև ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:
- 2.1.1 կետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետը խախտվել է 30 օրից ավելի:
- 2.1.7 կետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.
- 2.1.7.1 կետի համաձայն՝ Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտել է 30 օրից ավելի:

- 2.4.1 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավոր է Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով.
- 8.7 կետի համաձայն՝ ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում նույն կետով սահմանված դեպքում աապրանքի մատակարարման

ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

- 8.10 կետի համաձայն՝ Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, նույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

«Հայկական •ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի և «ԷՅՉ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի միջև 19.04.2018թ. կնքված թիվ 01/058 ծածկագրով գնման պայմանագրի տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացույցով սահմանվել է գնման ենթակա առարկայի հետևյալ բնութագիրը.

1-ին չափաբաժին՝ անվանումը՝ Շինարարական սեպավոր փայտամած ԼՍԿ-50 (ЛСК-50).

- տեխնիկական բնութագիրը՝ Շինարարական սեպավոր փայտամած ԼՍԿ-50 (ЛСК-50) պետք է արտադրված լինի ՏՈ (ТУ)-5225-001-84237960 և ԳOUS-27321-87 պահանջներին համապատասխան: Տախտակամածի խողովակները՝ համաձայն ԳOUS - 3262 և ԳOUS-10704 պահանջների: Ճնշումը տախտակամածի վրա 200կգ/մ^2: Մետաղական հարթակի ծածկույթը լինի պոլիմերային անհարթ կամ մետաղական անհարթություններով (рефленный или пуклёвкой): Փայտամածի գույնը համաձայնեցնել Պատվիրատուի հետ: Ուղղահայաց էլեմենտ (вертикалный элемент) Ø=48 *2մմ, կցեզրի քայլը (фланец) 500 մմ, ℓ=1 մ - 500 հատ: Ուղղահայաց էլեմենտ (вертикалный элемент) Ø=48 *2մմ, կցեզրի քայլը (фланец) 500 մմ, ℓ=2 մ - 860 հատ: Ուղղահայաց էլեմենտ (вертикалный элемент) Ø=48 *2մմ, կցեզրի քայլը (фланец) 500 մմ, ℓ=3 մ - 226 հատ: Ուղղահայաց էլեմենտ (вертикалный элемент) Ø=48 *2մմ, կցեզրի քայլը (фланец) 500 մմ, ℓ=1,5 մ - 20 հատ: Հորիզոնական էլեմենտ (ригель), Ø=48 *3մմ, ℓ=0,25մ - 68 հատ: Հորիզոնական էլեմենտ (ригель), Ø=48 *3մմ, ℓ=0,5մ - 25 հատ: Հորիզոնական էլեմենտ (ригель), Ø=48 *3մմ, ℓ=0,75մ - 307 հատ: Հորիզոնական էլեմենտ (ригель), Ø=48 *3մմ, ℓ=1մ - 595 հատ: Հորիզոնական էլեմենտ

(ригель), Ø=48 *3մմ, ℓ=1,5մ - 307 հատ: Հորիզոնական էլեմենտ (ригель), Ø=48 *3մմ, ℓ=2մ - 320 հատ: Հորիզոնական էլեմենտ (ригель), Ø=48 *3մմ, ℓ=2,5մ - 568 հատ: Հորիզոնական էլեմենտ (ригель), Ø=48 *3մմ, ℓ=3 մ - 577 հատ: Անկյունագծային պահանգ (диагональная распорка),չափը՝ 200x150 սմ - 21 հատ: Անկյունագծային պահանգ (диагональная распорка), չափը՝ 300x200 սմ, 71 հատ: Մետաղական հարթակ (настил металлический), չափը՝ 0,5x0,28մ÷0,3մ - 80 հատ: Մետաղական հարթակ (настил металлический), չափը՝ 0,75x0,28մ÷0,3մ - 22 հատ: Մետաղական հարթակ (настил металлический), չափը՝ 1,0x0,28մ÷0,3մ - 300 հատ: Մետաղական հարթակ (настил металлический), չափը՝ 1,5x0,28մ÷0,3մ - 160 հատ: Մետաղական հարթակ (настил металлический), չափը՝ 2,5x0,28մ÷0,3մ - 332 հատ: Կողային փայտյա պարիսպ, (бортовое деревянное ограждение) չափը՝ 0.15 x 1.0 մ - 110 հատ: Կողային փայտյա պարիսպ, (бортовое деревянное ограждение) չափը՝ 0.15 x 1.5 մ, - 20 հատ: Կողային փայտյա պարիսպ, (бортовое деревянное ограждение) չափը՝ 0.15 x 2.0 մ, - 160 հատ: Կողային փայտյա պարիսպ, (бортовоедеревянное ограждение) չափը՝ 0.15 x 2.5 մ, - 50 հատ: Կողային փայտյա պարիսպ, (бортовое деревянное ограждение) չափը՝ 0.15 x 3.0 մ, - 100 հատ: Հարթակ մտոցով (люк) և աստիճանով, չափը՝ 60x 200սմ - 30 հատ: Հարթակ մտոցով (люк) և աստիճանով, չափը՝ 60x 300սմ - 20 հատ: Հարթակ մտոցով (люк) և աստիճանով, չափը՝ 75x 250սմ - 20 հատ: Մետաղական աստիճան կախովի (лестница металлическая навесная), չափը՝ 200x 60 սմ, 50 հատ: Պարիսպ (ограждение) մետաղական հորիզոնական էլեմենտների վրա ամրացվող, չափը՝ h= 1.0 մ, L=1,0 մ 300 հատ: Ուժեղացված հորիզոնական էլեմենտ (ригель усиленный), ℓ=1 մ - 50 հատ: Ուժեղացված հորիզոնական էլեմենտ (ригель усиленный), ℓ=2 մ - 50 հատ: Ուժեղացված հորիզոնական էլեմենտ (ригель усиленный), ℓ=2,5մ - 150 հատ: Ուժեղացված հորիզոնական էլեմենտ (ригель усиленный), ℓ=3մ, 150 հատ: Տախտակամածի անկյունային էլեմենտ (Угловой добор настила), UDC 75 - 130 հատ: Տախտակամածի անկյունային էլեմենտ (Угловой добор настила), UDC 100 - 130 հատ:

- չափման միավորը՝ հատ,
- ընդհանուր գինը՝ 63.870.000 ՀՀ դրամ,

- մատակարարման հասցեն՝ Արմավիրի մարզ, ք. Մեծամոր «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ,

- մատակարարման ժամկետը՝ պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 40 օրացուցային օրվա ընթացքում:

2-րդ չափաբաժին՝ անվանումը՝ Շինարարական սեպավոր փայտամած.

- տեխնիկական բնութագիրը՝ Շինարարական սեպավոր փայտամած Layher կամ համարժեքը: Խամութ սեպավոր, չպտտվող կոշտ (неповоротный жесткий) NK 48148 կամ համարժեքը – ցինկապատ - 250 հատ, 48,3 մմ տրամագծով խողովակների համար: Կոտոշ խամութ կողային պարիսպի ամրացման համար (рог-хамут) - 100 հատ, 48,3 մմ տրամագծով խողովակների համար: Կողային փայտյա պարիսպ (Бортовые ограждение и образный) չափսը՝ 0,73x0,15 սմ - 50 հատ:

- չափման միավորը՝ հատ,

- ընդհանուր գինը՝ 5.000.000 ՀՀ դրամ,

- մատակարարման հասցեն՝ Արմավիրի մարզ, ք. Մեծամոր «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ,

- մատակարարման ժամկետը՝ պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 40 օրացուցային օրվա ընթացքում:

«ԷՅՉ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն 25.05.2018թ. գրությամբ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ին հայտնել է հետևյալը.

«19.04.2018թ. կնքված թիվ 01/058 գնման պայմանագրի շրջանակներում «ԷՅՉ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն և «ՌոսՍերվիս» ՍՊԸ-ն (համատեղ գործունեության պայմանագիր) պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 40 օրացուցային օրվա ընթացքում պետք է իրականացնեն պայմանագրով նախատեսված ընդհանուր 68.870.000 (վաթսունութ միլիոն ութ հարյուր յոթանասուն հազար) ՀՀ դրամի շինարարական սեպավոր փայտամածերի մատակարարում:

Գործարանի ծանրաբեռնվածության և պատվերի մեծաքանակ լինելու պատճառով մեր արտերկրյա գործընկեր, վերոնշյալ ապրանքատեսակների արտադրող հանդիսացող կազմակերպության կողմից ապրանքատեսակների արտադրման և մատակարարման

ժամկետ էր սահմանվել 50-60 աշխատանքային օր: Ապրանքները գտնվում են արտադրական վերջին փուլում և շուտով պատրաստ կլինեն մատակարարման:

Հաշվի առնելով վերոգրյալը, կողմերի միջև կնքված թիվ 01/058 պայմանագրի 8.7 կետը, խնդրում եմ Ձեզ երկարացնել ապրանքատեսակների մատակարարման վերջնաժամկետը 30 օրացուցային օրով:»:

31.05.2018թ. «ԷՅՉ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի և «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի միջև կնքվել է թիվ 1-01/058 լրավուցիչ համաձայնագիր (այսուհետ՝ նաև Համաձայնագիր):

Համաձայնագրի՝

- 1.1 կետի համաձայն՝ Կողմերը որոշեցին թիվ 1 Հավելվածում՝ «նախատեսվում է մատակարարել 2018թ. մայիս ամիսը» շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «հունիսի 7-ը ներառյալ».
- 3-րդ կետի համաձայն՝ նույն լրացուցիչ համաձայնագիրը հանդիսանում է 19.04.2018թ. թիվ 01/058 պայմանագրի անբաժանելի մասը, որը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև հունիսի 7-ը ներառյալ:

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ն 12.07.2018թ. գրությամբ «ԷՅՉ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին հայտնել է հետևյալը.

««Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի և «ԷՅՉ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի (որպես Գործընկեր 1 Գործընկեր 2-ի՝ «ՌոսՍերվիս» ՍՊԸ-ի կողմից տրված լիազորագրի հիման վրա) միջև 19.04.2018թ. կնքված թիվ 01/058 ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետ՝ նաև Պայմանագիր) համաձայն, Ձեր ընկերությունը պարտավոր էր մինչև 2018թ. մայիսի 28-ը «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ին մատակարարել երկու անուն շինարարական սեպավոր փայտամածեր՝ 68.870.000 ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ:

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի և «ԷՅՉ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի միջև կնքված լրավուցիչ համաձայնագրով մատակարարման ժամկետը երկարացվել էր մինչև հունիսի 7-ը ներառյալ, սակայն առ այսօր պայմանագրով նախատեսված ապրանքներից ոչինչ չի մատակարավել:

Հիմք ընդունելով պայմանագրի 2.1.7 կետը և 2.1.7.1 «բ» ենթակետը՝ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ն 11.07.2018թ. միակողմանի լուծում է վերը նշված

պայմանագիրը՝ երկու անուն շինարարական սեպավոր փայտամածերի մասով, որոնց ընդհանուր արժեքը կազմում է 68.870.000 ՀՀ դրամ:

Տեղեկացնում եմ, որ «ԷՅՉ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հինգ բանկային օրվա ընթացքում «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ում բացված 1930000199200100 հաշվեհամարին փոխանցել 1.101.920 (մեկ միլիոն մեկ հարյուր մեկ հազար ինը հարյուր քսան) ՀՀ դրամ, որպես տույժ:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ «ԷՅՉ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ից կգանձվի նաև պայմանագրի կատարման ապահովման գումար՝ որպես պայմանագրի կատարման ապահովում՝ 68.870.00 (վեց միլիոն ութ հարյուր ութսունյոթ հազար) ՀՀ դրամի չափով՝ «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ում բացված 1930000199200100 հաշվեհամարին:»:

Ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստի ժամանակ Ընկերության ներկայացուցիչը հայտնեց, որ 19.04.2018թ կնքված թիվ 01/058 ծածկագրով գնման պայմանագրով նախատեսված ապրանքը հրարավոր չէր պատրաստել Հայաստանի Հանրապետությունում, այն պետք է ներկրվեր Ռուսաստանի Դաշնությունից, ինչի համար ավելի երկար ժամկետ էր անհրաժեշտ, քան նախատեսված էր Պայմանագրով, այդ իսկ պատճառով Ընկերությունը դիմել էր Պատվիրատուին և խնդրել երկարացնել Պայմանագրի ժամկետը 30 օրով: Այնուհետև, Պատվիրատուի և Ընկերության միջև 31.05.2018թ. կնքվել է լրացուցիչ համաձայնագիր, որի արդյունքում Պայմանագրի ժամկետը երկարաձգվել է մինչև 2018թ. հունիսի 7-ը ներառյալ: Ընկերության ներկայացուցիչը հավելեց, որ պայմանագիրը միակողմանի լուծելու դեպքում Պատվիրատուն պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումը պետք է հրապարակի www.gnumner.am կայքում, ինչը սակայն Պատվիրատուի կողմից չի կատարվել:

Բողոքներ քննող անձի այն հարցին, որ եթե Պատվիրատուն պայմանագրի կատարման ժամկետը երկարաձգեր՝ 30 օրով, արդյո՞ք նախատեսված ապրանքը կմատակարարվեր այդ ժամկետում, Ընկերության ներկայացուցիչը հայտնեց, որ, եթե Պայմանագրի կատարման ժամկետը երկարաձգվեր 30 օրով, ապա միանշանակ նախատեսված ապրանքը կմատակարարվեր տվյալ ժամկետում:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» (այսուհետ նաև՝ Կարգ) կարգի՝ 33-րդ կետի 16-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագրով (նախագծով) սահմանվում է նաև, որ՝ պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 6-րդ հոդվածի՝

- 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը.
- 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող անձի մոտ՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է

կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

- «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի և «ԷՅՉ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի միջև 19.04.2018թ. կնքվել է թիվ 01/058 ծածկագրով գնման պայմանագիր:
- Թիվ 01/058 ծածկագրով գնման պայմանագիր թիվ 1 Հավելված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով մատակարարման ժամկետը սահմանվել է՝ պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 40 օրացուցային օրվա ընթացքում:
- 25.05.2018թ. «ԷՅՉ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն դիմել է «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ին և խնդրել թիվ 01/058 ծածկագրով գնման պայմանագրի կատարման ժամկետը երկարաձգել 30 օրով:
- «ԷՅՉ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի և «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի միջև 31.05.2018թ. կնքվել է թիվ 1-01/058 լրացուցիչ համաձայնագիր, որի համաձայն Պայմանագրի կատարման ժամկետը երկարաձգվել է մինչև 2018թ. հունիսի 7-ը ներառյալ:
- Թիվ 1-01/058 լրացուցիչ համաձայնագրով սահմանված ժամկետում «ԷՅՉ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն չի մատակարարել Պայմանագրով նախատեսված ապրանքը:
- Ընկերությունը պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված, երբ Պատվիրատուն պայմանագիրը լուծելու մասին ծանուցումը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում:
- «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից պայմանագիրը լուծելու մասին ծանուցումը www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում չի հրապարակվել:

Այսպիսով, Բողոքներ քննող անձը գտնում է, որ Պատվիրատուն պայմանագիրը լուծելու մասին ծանուցումը www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում չհրապարակելով՝ խախտել է Կարգի 33-րդ կետի 16-րդ ենթակետով և Պայմանագրի 8.10 կետով սահմանված պահանջները:

Հաշվի առնելով, որ Պատվիրատուն պայմանագիրը լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում չի հրապարակել, հետևաբար Բողոքներ քննող անձը գտնում է, որ

19.04.2018թ. կնքված թիվ 01/058 ծածկագրով գնման պայմանագիրը չի կարող համարվել միակողմանի լուծված:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Բողոքներ քննող անձը գտնում է, որ «ԷՅՉ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 12.12.2018թ. թիվ 27/26-3/23038-18 գրությամբ «ԷՅՉ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ